երկու ոտքը բռնել և առել էր իր բերանը, կլանում էր: Աղջիկն ասում է՝ զարկ կացնովդ դրա գլխին և սպանիր: Իսկ ես սալացել, չեմ կարողանում վեր կենալ: Աղջիկն ասում է, ինձ տուր կացինդ, ես կխփեմ դրան, քանզի դու մտար իմ արյունը և իմ ծնողներից ինձ հանեցիր, այժմ ինչպե՞ս ես թողնում ինձ այսպիսի մահով մեռնել: Նա այսպիսի խղճալի տեսքով լալիս էր ու աղաչում, իսկ ես սալացել, ապուշ էի կտրել, չէի կարողանում շարժվել. իսկ վիշապը աղջկան կլանեց մինչև կուրծքը: Իսկ աղջիկը բազուկը մեկնեց, թերևս չկարողանա կլանել: Իսկ վիշապը ամփոփեց պոչը և սաստիկ կծկվելով բացեց բերանը և աղջկան քաշեց իրեն և ջարդեց աղջկա թևերը, կլանեց աղջկան և գնաց մտավ իր բույնը: Իսկ ես մնացի ինչպես մեռել անշարժ: Մի պահ հետո դարձյալ վիշապը դուրս եկավ և ինձ էր նայում: Սրտապատառ եղա, և իմ բերանից շատ արյուն դուրս եկավ, իմ բոլոր զգայարանները ընդարմացան, միայն աչքերս բաց մնացին, և տեսա, որ վիշապը մտավ իր բույնը, և ապա ուշաբերվեցի, բայց իմ ոտքերը ուժ չունեին դուրս գալու: Սողալով մինչև լուսաբաց ելա քարայրի դուռը, մնացի քարայրի դռանը: Երբ լուսացավ՝ հազիվ կարողացա ոտքի կանգնել ու գնալ: Աղջկա հոր ահից չգնացի մեր գյուղը, այլ ուրիշ գյուղից մի ծանոթ գտա և ամենը պատմեցի, իսկ ես եկա հոգևոր տեր Փիլիպոսի մոտ և խոստովանեցի նրան: Ահա այս է պատճառը, որ իմ երեսը գույնից գույն է փոխվում: Մենք նրանից լսեցինք և փառք տվինք Աստծուն:

ԳԼՈՒԽ ԼԱ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՅՆ ՎԻՇԱՊԻ ՄԱՍԻՆ

Մեզ պատմեցին, թե Աղստևի գավառում[138] մայրի անտառների մեջ մի քարայր կա, որ գետնից բարձր է երկու մարդաչափ: Այնտեղ բույն էր դրել մի ահագին վիշապ: Ցերեկվա կեսօրին բնից կախվում էր և նայում այս ու այն կողմ: Եթե ինչ-որ կենդանի էր տեսնում, իջնում էր և հարձակվում նրա վրա, որ թե կարողանում էր, կլանում էր: Իսկ եթե չէր կարողանում, վերադառնում էր իր բույնը: Ոչ ոք չէր կարողանում սպանել այն, որովհետև քարայրը բարձր էր: Մի քահանա ինչ-որ հնարքով սպանեց այն: Քանզի շինեց եռաժանի մի ճանկ, որի ծայրին կապեց օղ, պարան կապեց օղին: Մի ուլ մորթեց, մորթը տիկ հանեց, տկի մեջ դրեց ճանկը և տիկը լցրեց խոտով, ուլի գլուխն ու ոտքերը ինչ- որ հնարքով միացրեց տկին և պարանի ծայրը բռնեց, գնաց նստեց հեռու մի ծառի տակ, մի մարդ էլ նրա հետ: Օրը կեսօր դառնալով վիշապը ելավ և կախվեց քարայրից, տեսավ ուլը քարայրի դռան մոտիկ, իջավ ու կլանեց ուլը, կամենում էր վերադառնալ քարայր, քահանան պարանը քաշեց, ճանկը մտավ վիշապի մարմնի մեջ: Վիշապը ճչում էր, պոչով հավաքում էր բույսերն ու խոտերը և ինչ որ պատահում էր: Իսկ քահանան պարանը քաշում էր, վիշապը դառնում էր դեպի քարայրը, ճչում էր սաստիկ, գալարվում էր և պոչը խփում էր այստեղ, այնտեղ: Այնքան չարչարվեց, մինչև սատկեց: Իսկ երեցը մաշկը տիկ հանեց, աղեց, տարավ իրենց իշխանին: Երկայնությունը չափեցին, տասնութ թիզ էր, իսկ լայնքը չորս թիզ: Ապա մորթի մեջ ցողուն լցրին և ուղարկեցին շահին: Սպանման պատմությունը գրեցին և մորթու հետ ուղարկեցին շահին: Իսկ նա քահանային արքունական հարկից ազատեց և նրան նշանակեց նրա գյուղի ավագ:

ԳԼՈՒԽ ԼԲ
ՕՁԱՀԱՐ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Արարատյան երկիրը բերրի է, առատ ամեն ինչով և էժան: Այդ պատճառով ամեն կողմերից գալիս են Երևան ու գնումներ անում, ինչ որ կամենում են, և վերադառնում են իրենց տեղերը: Նույնպես Թավրիզից եկան բազմաթիվ կարավաններ, գնեցին բրինձ, բամբակ, յուղ, պանիր, ճրագու, ձեթ, կաշի, մորթի և այլն, ինչ որ կամեցան, առան և գիշերը հովի պատճառով ճանապարհ էին գնում, իսկ ցերեկը շոգի պատճառով հանգստանում էին: Գնացին մինչև Վեդու դաշտը[139] և իջան մի տեղ ամբողջ օրը, երեկոյան կամենում էին բառնալ (բեռները): Մեկը նրանցից գնաց ջրի մոտ ոտքերը մերկացրեց, որ լվանա: Ահա մի օձ պատահեց և ոտքը խայթեց: Մարդը գոչեց ընկերներին, եկան տեսան նրան, օձը գտան և սպանեցին: Քանզի կարավանը բեռնում էին, որ գնան, իսկ օձահար մար-